

առջև՝ Եւրոպան իսկ խոնարհեցուց եւ իր տեղը նստեցուց :

Այդ ի՞նչ հրաշագործ արեղ է՝ որ երկրորդական ուժերով կարճ ժամանակուան մէջ Հայաստանը ջախջախեցին յետոյ՝ ծովը նետեց ամբողջ յունական բանակը եւ ի վերջոյ ամբարտաւան ու «սլայթելու» տրամադիր Մուսոլինիներն անգամ դաշինքներու ծանծաղ ակերբ ատաճորդեց :

Իսալեւթուրք գաշնազիրը ինչ շարժառիթով ալ մեկնուի, քեմալական Թուրքիոյ յաղթանակներէն եւ քաղաքական նորագոյն նուաճումներէն կարեւորագոյնը պիտի մնայ : Մուսոլինիները տնտեսական խաղաղ թափանցման յոյսը կրնան սնուցանել, բայց Մուսթաֆա Բեմալները անկասկած աւելի արթուն ու խորամանկ են՝ այդ յոյսերուն ասպարէզ ու երաշխիք ներշնչելով : Եւ յոյսը դեռ յոյս է, որուն մէջ հայկական միամտութիւնը ազատ է սփոփանք ու անխմանալի դադանիքներ երեւակայել, առանց սահայն ռեւէ վնաս հասցնելու թուրքերուն ու Թուրքիային :

Ազադան պիտի ցոյց տայ՝ թէ Բեմալը եղաւ խարոզը թէ Մուսոլինի : Եւ ապագայէն առաջ աւելորդ է շեշտելը, որ «արկղ»ի կամ «սնտուկ»ի պատկերաւոր խօսքը մոլորութիւն մըն է, հայ քաղաքական մտածողութեան մըրբային ու բռնադրօսիկ ամբարտաւանութիւնը հաստատող, որոնք այնքան սուղ արժեքին մեղ :

Մահուան անտուկներու եւ իրազայներով մարդարէութիւնները չէին՝ որ մեծ պատերազմը քանի մը ամիսէն իրենց վախճանին պիտի հասցնէին, ջախջախելով ու փշրելով թուրքերը, «Հիւանդ Թուրքիան» եւ մեզի բերելով բիր-բիր բարիք, հայրենիք ու ազատութիւն : Մինչդեռ պատերազմը քանի մը տարի տեւեց, եւ նոյնիսկ մահուան սնտուկն ու դադաղը եղաւ բովանդակ տաճկահայութեան : Թուրքերը չգոհացան միայն սպրող հայութիւնը կոտորելով ու բնաջնջելով, անոնք քայքայեցին ու աւերակեցին մեք պապերու դերեզմաններն անգամ եւ այդ գերեզմաններու սրբատաշ քարերն ու մարմարները շինուածանիւթ ծառայեցուցին իրենց օճախներու, ա-

կումբներու, պետական եւ հանրային հաստատութիւններու կառուցումին :

Թուրքիան աւերակ ու աւեր կը ներկայացնեն ամէն օր, բայց աւերակներուն մեծագոյնը Հայաստանն է, հայութիւնը եւ հայ քաղաքական մտածողութիւնը :

Մենք ենք աւերակը, իսկ Թուրքիան բազմաձէ մեր դարաւոր ժառանգութիւններուն վրայ՝ Սերաստիայէն արեւմուտք եւ մինչեւ Վասպուրական ու Երեւան :

Եւ այն իրողութիւնը՝ թէ թուրքերը իրենց իշխանութիւնը արեւմտեան Հայաստանին վրայ պահելէն զատ յաջողեցան երթալ-հասնիլ մինչեւ Կարս ու Ախուրեան, ամենէն ջախջախիչ փաստն է, թէ քեմալականութիւնը քուրանակուն հայրենիքի համբուն մէկ մասը կրտրած է արդէն :

Մենք չպիտի սպասենք «Կիւրոսի, Ալեքսանդր Մակեդոնացիի կայսրութեանց սահմաններէն աւելի լայն» Թուրքիա մը տեսնելու՝ համոզուելու համար քեմալականութեան յաղթանակին եւ թուրանականութեան դոյութեան : Այդպիսի սպասում մը մեզ կը ձգէ լարձուն ճամարտակութիւններու մէջ : Բեմալի յաջողութիւնները եւ աչք ծակող թուրանականութեան առաջին հանգրուանին նուաճումն ու իւրացումը թուրքերու կողմէ՝ բաւական չօշափելի հիմունքներ են վերջ դնելու մեր սփեհտութեանց :

Բեմալականութիւնը կրնա՞յ ընդարձակել իր այսօրուան հողերը : Թուրքերը կրնա՞ն Ատրլպատականն ու Ատրպէյճանը միացնել իրենց՝ թուրանական շարժումը հասցնելով նորագոյն հանգրուաններու եւ խարխիսներու :

Միշտ մըն է ասիկա, որուն քննութիւնը իսպառ դուրս է մեր նիւթէն : Թուրանականութեան սահմանագծումը եւ ընդարձակութեան սատիճանը չեն որ պիտի համոզեն մեզ՝ անոր գոյութեան մասին : Թուրքիոյ ներկայի տարածութիւնը եւ արեւմտեակն ու արեւելեակն Հայաստանի վրայ ունեցած իշխանութիւնն ու դիրքը բաւարար պատկեր է քեմալականութեան քուրանակուն ծրագիրներուն վրայ փոփոխող ու հեզուութեամբ չնայելու համար :

Բեմալականներու՝ թուրք եւ թաթար ժողովուրդներու միացումով ու աշխատակցու-